ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2014 թվականի N 33 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՂՉԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների ընտանեկան սոցիալական ծանր պայմանները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով, 34-րդ կետի 2-րդ պարբերությամբ, <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դ) կետով և հիմք ընդունելով իրենց երեխաներին ծնողական վճարներից ազատելու խնդրանքով նախադպրոցական ուսումնական հաստատություններ դիմած ծնողների դիմումները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____